




ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ — ՀԱՍՏԱՐԱՎԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

№ 7

1912 թ.

ՇԱՐԱԹ 7 ԱՊՐԵԼԻ

1912 թ.

№ 7

ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԸ

Առաջնակարգ հայ դրամատուրգը

Մարտ 16-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 10-ին

Հանգիստ վարձանուէրացաւ թիֆլիզում 87 տարեկան հասակում:

ԸՆՍՈՊՈՍԵԼԻ ԱԻԵՏԻՍ

«Դաշնակցութեան դատը», որ երկար ամիսներէ լինելով վերադարձուած էր ամբողջ Ռուսաստանի մասում, որ վերջերս առանձին պայմաններում քննուած էր Պետերբուրգում, ամենամանկակալ վախճան ունեցաւ նախքան ձառնկելը Սակաւները դատաւարութեանը: Մեծամասնութիւնը ազատ արձակուեցաւ, մինչդեռ թէ՛ ձեռքաւորութեանը և թէ՛ զրոյի մարդիկ ծանրադոյն վճիռներ էին սպասում: Անհուն բերկրանքով եւրոպայում ազատութեանը և Ռուսական արդարադատութիւնը, որ բոլոր հայերին շնորհապարտ և ուրախ է դարձրել: Կրկնակի խնդակցութիւն, ենթադրութեամբ անմեղ և խարդախութեամբ թողնելով ձեռքաւորութեանը, և բանտային չարաշարներ ու ծանր զրկանքներ կրածներին անսպասելի ազատութեան համար, այլևս վերացաւ այն մեծ սուգը, որ վաղուց ծանրացած էր Դաշնակցական կուսակցութեան գլխին:

Ժ. (16-րդ) ԴԱՐՈՒ ՅԱՅՏՆԻ ՄԻ ԳՐԱԳԵՏ ԱՐԱԲԻ ԿԱՐԾԻՔԸ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Չպէտք է ամուսնանալ այն կնոջ հետ, որ շարունակ տրտնջում ու գանգատում է:
2. Չպէտք է ամուսնանալ այն կնոջ հետ, որ ոչինչ բանի վրայ չապրում է:
3. Չպէտք է ամուսնանալ այն կնոջ հետ, որ ինչ որ տեսնում է՝ պահանջում է այս բանն առէք ինչ համար, «Երբ էք ինչ գործի գործը»:
4. Չպէտք է ամուսնանալ այն կնոջ հետ, որ շարունակ ուրիշներին ծաղրում է նրանց լեռնից, բայց երեսից ամենաստոր կերպով քննում և իրեն բարեկամ է ցոյց տալիս հենց նոյն անձին, որին նա ամենից շատ է ծաղրում և բամբակում:

Անցան. Թողցե՛ք այս աշխարհը հայ թաւերական գրականութեան նահապետ—աւերակ Պարթիէ Սուրբուկեանը—և դիմեց զէպի յաւիտեանակալութիւն:

Այլ ևս զաղաւթն ստեղծագործելուց այն բեղմնաւոր ու սրտոտ միտքը, որ արհամարհումների իջից Պէպոնի պատուաւիրը և սքանչելի տիպ է կերտել և ազնիւ ու պատուաւոր հռչակուած: Ներքին (վաճառականների) դասից ցուցադրել է մեծ անխղճութեան և բարոյական սնանկութեան մի ցայտուն տիպար՝ յանձին Զիմովների:

Որքան գեղեցիկ ներդաշնակութիւն բարոյի և գործնականի միջև: Ի՞նչ ազնիւ մտքի ու նա քարոզել է բեմից, նոյն մտքի գործադրողը եղել է նա և իրական կեանքում:

Նա չբարոյաց այլ բան և գործեց հակառակը, որպէս անում և վարում են մեր գրական ու ժողովրդական գործիչներից շատերը, գրեթէ, մեծամասնութիւնը: Սէրը, մարտնչութիւնը և ազնւութիւնը եղել են մեր սիրելի նահապետի գեղեցիկ յատկանիշները: Եւ այդ պատճառով իսկ նա հաւասարապէս սիրելի է եղել մեր հասարակական գործիչների տարբեր և այլազան խաւերին, և անգամ այլ ազգերին: Մյուսը զանազան ուղղութեան պատկանող օրգաններ և գործիչներ մէկը միւսից աւելի անկեղծ, աւելի զգացուած ջատագովականներ և գնահատական յոգուածներ են գրում նորա մասին:

Հայերից ոչ պակաս ողորմ և զրհմահաւոր են Սուրբուկեանին Կովկասահայերի հարեան Վրացիները:

Յայտնի գրող-քննադատ Կիտա Ս. բաշիձէն իւր դամբականակնում այսպէս է բնորոշում Սուրբուկեանին:

«Սուրբուկեանը ոչ միայն հայ ազգի արժանաւոր գաւազն ու տաղանդաւոր դրամատուրգն է, այլ և նա վրացիների համար ևս մեծապարզ դրամատուրգն է, որովհետեւ նրա պիեսները ինչպէս որ

հիացմունք են պատճառում հայ ժողովրդին, նոյնպէս և հակապակաս տպաւորութիւն են թողնում վրացիների վրայ»:

Սուրբուկեանը ոչ միայն տաղանդաւոր դրամատուրգ էր, այլ և իսկական քրիստոնեայ: Որպիսի հաւատ, սէր, խաղաղութիւն և ներողամտութիւն չեն բուրում նրա կտակի այս առաջին և վերջին տողերը:

—Մնաք բարով, իս գնացի, գնացի էն հանդի տիղ, վուրդանց, ինչ աշխարհը ստիղծվի է, ջեր օյոզ չէ յիլ էկի...»:

—Մնաք բարով, սիրելի մարթիր, ինչ ասկի, ցիղի և հաւտի էլ բլիբ:

Մնաք բարով, սիրած Թիֆլիզ բաղար:

Մնաք բարով, իմ սիրելի ու պաշտելի ասկ:

Աստուած վաթանիդ արժանի անէ, Դիփունիդ սէրը սրտումս խուռը թաղած, տանում եմ հիտս:

—Մնաք բարով:

Ընդհանրապէս մեծ դրամատուրգ, խաղաղ երթ բեզ զէպի յաւիտեանակալութիւն, զէպի չվերադարձողների անյայտ ու անհերք օթեանը:

ՊԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՈՒՐՁԸ

Նախկին Շահ Մամէդ Ալին «Beq. Br.»-ի ասելով մտադիր է մի առանձին կոչ ուղղել պարսիկ ժողովրդին՝ իրեն արդարացնելու նպատակով: Կոչի մէջ նա առաջ պիտի բերի այն պատճառները, որոնք հարկադրեցին նրան վերադառնալ Պարսկաստանից, և պիտի յայտարարէ, թէ ինքը կամենում էր գործել ոչ թէ ժողովրդին դէմ, այլ նրա օգտին: Իր ասածները նա պիտի հաստատէ փաստաթղթերով:

Պարսից պետական խնամակալը «H. B.»-ի թղթակցին յայտնեց, որ մէջլիսի ընտրութիւնները յետաձգուած են մինչև երկրի հանգստութիւնը:

Օգէստայից նախկին շահի կինը (Մալաքէի Զհան) գիմեց հեռագրով Թէհրան՝ Պարսից պետական խնամակալին Նասր-օլ-Մուլին, որպէս զի վերջինս թող

1) Ցիւ «Մշակ» № 63, էջ 2-րդ, սիւն 5-րդ:
2) Համեմատել Համիթի «Էլիսիլ չիլիսի» մենախօսութեան հետեւող տողերի հետ:

The undiscovered country, from whose bourn
No traveller returns, puzzles the will..

ԽՐԱԿԱՆ ԿԵՆՈՒՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրում է գրեն պարզ, մաքուր և անպայման բոլորի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում թրուածք՝ ստացուած յոգուածները փոփոխութեամբ և կրճատութեամբ հրատարակելու:
3. Մենք մերժում ենք «Է» և «Բ» ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ—ու—ով:
4. Չսպում կարճ յոգուածները չեն վերապահում: Ուղարկուած և չտպուած նիւթերը չեն ստանալու համար պէտք է ուղարկել պատի ծախսը:
5. 2ի տպուի ոչ մի յոգուած եթէ դա կեղծ անուն հետ միաժամանակ չի կրի յոգուածագրի իսկական անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթ շտապաւոր պէտքով շուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չսպում յոգուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

ԶԵՆԿԸ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՆԱՆՔԸ

Ռուսական հիւպատոսը յայտարարել է ի գիտութիւն Մէջհէզ քաղաքի բնակիչներին, որ նրանք 3 օրուայ ընթացքում իրենց մօտ եղած գէնքերը պարտաւոր են լանձնել ռուսաց իշխանութեան: Քաղաքում եղան մի քանիսը, որոնք չուզեցին կատարել այդ պահանջը: Անկարգապահները բաւոյն նստեցին մեծ մէջիղում որպէս մի ցոյց՝ ռուսաց իշխանութեան կարգադրութեան չհնազանդութեան ցանկութիւն արտայայտելու համար:

Թէհրանի թիւրքաց գեսպանը իր պաշտօնատեղին հասնելուց անմիջապէս յետոյ շտապով Օգէստայի վրայով մեկնեց Կ. Պոլիս՝ Բ. Իրան կարգադրութեան համաձայն: Օգէստայի թիւրքաց հիւպատոսարանի քարտուղարի ասելով, ճանապարհորդութիւնը ունի քաղաքական կարևոր նշանակութիւն:

«Մշակ»

Մամէդ-Ալի Զահի Օգէստա հասնելուց յետոյ նահանգապետի օգնականը գնացել է այցելութեան և միացել է նորին էջս Մեծութեան մօտ՝ մի ժամ ու կէտ: Էջս Զահի Օգէստա կամ օտարազգի թղթակիցներից ոչ մէկին չի ընդունել իր մօտ, բայց նրան տեսնողները պատմում են, որ նա չափազանց գունատու էր, նիհարել ու գեղեցիկ է հագնեց և այն լուսահատութիւնից՝ որ նա ոչ միայն չի կարող ալիւս իր գահին տիրանալ, այլ չի կարող ալ ևս իր սիրելի Իրանը մինչև անգամ տեսնել:

Նա գանգատուել է մի քանի օրոք անձնաւորութիւններից, սակայն իւր բարեկամները խորհուրդ են տուել, որ նա չգտնգատուի Ռուսներից կամ Անգլիացիներից, որովհետեւ իւր տարեկան 75000 թուման ռոճկի ստանալը կախուած է այդ երկու պետութիւնների բարի տրամադրութիւնից: Եթէ շահը նրանց հետ լուսավարուի, կարող է զրկուել իւր ռոճկից այն պարզ պատճառով, որ եթէ Անգլիոյ և Ռուսիոյ շնորհիւ չլինի Պարսիկ կառավարութիւնը նրա ռոճիկը չի տալ իր կամքով:

Լսուած ենք որ Սալար Դովլեհ, Զահի եղբայրը, Թէհրանի վրայ արշաւելով հասել էր մինչև Ղուււ, բայց լսելով որ Քիւմանշահիք նորից ապստամբելով

«Այժմ պարզ է—յայտարարում է կայսրը իւր հրովարտական—«որ ազգութեան մեծամասնութիւնը ցանկութիւն է յայտնել հասարակագետութեան հաստատութեան: Ժողովուրդի արտայայտած նախապատուութեան մէջ պէտք է ճանաչել Աստուծոյ կամքը: մենք ճիշդպէս կ'արողանայինք միջոցաւ հոգիների փափագներին դէմ դնել միայն մի ընտանիքի փառքն ապահովելու համար: Արդ մայր կայսրուհին ու կայսրը ի նկատի ունենալով հասարակութեան ցանկութիւնը իշխանութիւնը նենդանում ժողովրդին: Հետեւեալը էս, կայսրս, որոշում եմ որ Զինաստանում կառավարչական ձեւը սահմանադրական հասարակագետութեան փոխուի:»

Այսպիսի լուս վարմունքի դիմաց, լեզափոխականները փոքրիկ կայսրին թողնում են «այս—չին» (զուտաբերն տոհմից) տիպարը, տարեկան տալիս են 14 միլիոն ֆրանկ թոշակ, թողնում հանգրձն՝ պահելու պալատական պաշտօնեաներին, այն պայմանով միայն՝ որ նոր պաշտօնեաներից ոչ մէկը մի ներքինու չլանձնուի: Բացի դրանից, նրանք իրանց վրայ վերցրել են նշանակաւ կայսրների գերեզմանների վրայ հոգեհանգիստներ կառուցելը:

Սակայն, քիչ էր մնացել որ բոլոր կարգադրութիւնը (որ մի կողմից անկեալ Վեհապետին մի պատուաւոր դրութիւն է տալիս, իսկ միւս կողմից հեշտացնում մանուկ հասարակագետութեան հաստատութիւնը 18 մեծ նահանգներում) ջուրն ընկնէր և էլ երկար ժամանակ չվերականգնէր: Այս համաձայնութիւնը, ինչպէս ասացինք, արգարեալ շատ անստորգէր լինելու, եթէ բանակցողը—Հուան Դիկարը—լուսվար 16-ի ուսմանից անպիտան չպրծնէր:

Ուղեկցող զինուորներ ալ ու ձախ, Հուան Դիկար կառք մէջտեղում, որում անհոգութեամբ նստած ծխում էր իւր պապիկոսը, նա անցնում էր չինական մի ճաշարանի առջով, երբ լուսում է ուսմբի պայթիւն: Ընկնում են աստիկաններ, մի ձի, ամբողջ ահ ու սարսափ մէջ փախում է, բայց այդ բոլորի մէջ պրէմիերի ձիերը անվնաս արագութեամբ հասնում են նրան իւր ընկալողին:

Ոստիկանութիւնը նկատել էր իսկոյն որ ուսմբները—երեք էին, որոնցից միայն մէկն էր պայթել—նետուել էին ճաշարանի կտրից: Անմիջապէս շրջապատում են այդ շէնքը և բռնում երկու անձնաւորութիւն, որոնց մօտ գտնւում էր դարձեալ վեց ուրիշ ուսմբներ:

Առաջները եթէ լինէր, Մանդարինները¹⁾ գլուխ չէին ցաւացնել գործը քննելու, այլ իսկոյն բերել կտալին մեծ դանակաւոր դահլիճներին և տեղն ու տեղը տասը տասնուհինգի գլուխը թըռցնել կտալին: Հէնց վերջերս ապստամբեալների հետ այդպէս էին վարուում կայսերական զօրքի զօրավարները: Հասարակագետական գնդերը սակայն յետ էին կացել գլուխ կտրելուց: Նրանք լանցուորաներին գնդակահարում էին միայն և այդ նրանց կողմից համարուում էր լաւաջադիմական մի քալը...

Հուան Դիկար վերջին Մարտ ամսի 10-ի երգումով, զինուորական պաշտօնական հազուստով, ամբողջ Զինաստանի հասարակագետութեան նախագահն է ընտրուում:

Թարգմ. «L' Illustration»-ից
Ա. Օրդ—Խան

ԱՅՆ ԳԻՇԵՐ

Յոգնած, ուժասպառ հոգին փրաւոր, սիրտս միտում էր այն գիշեր՝ անյայտ թա-

1) Զինացի ազնուականները, բարձրաստիճան իշխանները:

փառումներից վատաւկած...

Ահ այն գիշեր, այն սարսափելի անցքից լետով, հոգուս վրայ ծանրացած դաւաճող բեռը ճնշում էր սիրտս, կրճատում ինչպէս գիշատիչ անգղ, տանջում սրպէս բռնաւոր:

Սարսափելի էր այն գիշեր, իւր բոլոր զարհուրելի, տխուր անցքերով...

Եւ էս մի անյայտ քամու հոսանքից բռնուած, սրպէս մի մոլորուած նաւ, տարոււմ էի տառջ, դէպի հեռուն, դէպի անյայտ...

Ու հոգիս կտնգ առաւ, այնտեղ՝ ընկածների մօտ արիւնքոտ դաշտում, որպէս մի լուղարկաւորութիւն տիպար, սգալի:

Անհուն զայրոյթով բռնուած՝ որպէս մի գազան, նրանք մոնչում էին ցաւի ճրնշումից և նրանց տնքոցից մայր երկիրը պատուում էր ու արեւնը կաթիլ կաթիլ ծորում էր նրա մէջ գարշելի, բոսորային: Կարմիր քամին էր մոնչում ու լալիւ և խառնում նրանց տնքոցների հետ անյայտ ամեկին...

Ու հոգիս, որպէս մի սգաւոր տաւաղբաւ, ծուկն էր դնում նրանց առջև: Սակայն... Հեռու սիրտ իմ այս արիւնքով վարից, հեռացիւր դէպ այնտեղ, ուր մեռելները ունին հանգիստ, ուր անուրջի մէջ մտորում են նրանք աստղերի հետ, և ուր խոր խաւարի մէջ լուսւմ է նրանց զարհուրելի, դիւարին քրքրները...

Եւ քալում էի նահատակների միջով լուս հանգիստ, սրպէս մի սգաւոր բուսերականների մէջ: Սե ու ալլանդակ մտքերը, ձիւաղների պէս չանգուում էին լողնու, լողում նրան, որպէս մրկուած ծով փոթորիկի քամին:

Իննթ քամին էր այն գիշեր հեծածում ու լալիւ, իւր տարօրինակ ելեւէջներով...

Մերթ ընդ մերթ լուսում էր նրանց ընկածների բողբոջ, զայրոյթ քամու գէմ, որ խանգարում էր իրենց գիշերային տարօրինակ հանգիստը, քունը:

Կարմիր լուսինը դուրս եկաւ ամպերի տակից և աղօտ կերպով լուսաւորեց արիւնքոտ դաշտը. կանգնեցի՝ բարձրաձայն բղթուն էլ օրորուեցին, որպէս աշնան սառը քամու առաջ մերկ տերեւներ և անյայտ անէծքի մոնչիւնով ընկան... անհուն էր...

Լայն վէրքերից ծորում էր արիւնք և ներկում երկրի կուրծքը, սիրտը:

Միայն խենթ ու խելաւ քամին էր մըռնչում ու լալիւ, և գնում մեռելու անյայտութեան մէջ...

Զարհուրելի էր այն գիշեր...
Լ. Խամուկէ²⁾

ԱՄԲՈՂՋ ԱԾԻԱՐԿԻ ՈՍԿԻՆ¹⁾

Միայն մի պետութիւն կարող է մըրցել Փրանսիայի հետ ոսկու այդ մենամարտում. դա Ռուսիան է: Սըղարե Ս. Պետերբուրգի Կայսերական բանկի ունեցած ոսկին 3 միլիարդ 400 միլիոն, հաւասար է մօտաւորապէս մերոնքի ունեցածին: Յետոյ հարստութեան աստիճանով գալիս են՝ Աւստրո-Ունգարիայի բանկը 1 միլիարդ 378 միլիոնով, Իտալիայինը 982 միլիոնով, որոնց միացնելով Նեապոլիսի բանկի 208 միլիոնը և Սիցիլիայի բանկի 47 միլիոնը, կազմում են 1 միլիարդ 237 միլիոնի մի պատկառելի գումար: Ապա՝ Անգլիայինը 1 միլիարդ 198 միլիոնով, Գերմանիայի Կայսերական բանկը 899 միլիոնով, Սպանիայինը 472 միլիոնով, Հոլանդիայինը 299 միլիոնով, Իէլլիկայի ազգային բանկը 187 միլիոնով, Ռուսական և Զեւցարիայի բանկերը իւրաքանչեւը 161 միլիոնով, Եւէդը 119 միլիոնով Դանէմարքան 105 միլիոնով, Նորվեգիան

1) Տե՛ս «Միտք» № 6
2) Շարունակեցէք պրիկ սիրելի աշակերտ, խմբ.

54 միլիոնով, Պորտուգալիան 36 միլիոնով, Բուլղարիան 34 միլիոնով, Սերբիան 29 միլիոնով, և վերջապէս Յունաստանը 9 միլիոնով:

Ինչպէս այս ճիշտ վիճակագրականից երևում է, եւրոպական ազգերի մէջ ամենահարուստները, ոսկով իհարկէ, Ֆրանսիան և Ռուսիան են, իսկ ամենաաղքատները Սերբիան և Յունաստանը:

Ազգերին պատահում են երբեմն մըռալլ օրեր, որոնց ժամանակ հորիզոնում երևան է գալիս պատերազմի ուրուականը. ահա այդ կուտակուած ոսկիներն են, որ թող են տալիս զօրքեր տեղափոխելու և նրանց ամեն տեսակ պէտքերը հոգալու: Ոսկիներն են, որ շատ անգամ տալիս են լաղթութիւնը, որովհետեւ պատերազմի համար ոսկի է հարկաւոր, իսկ այդ՝ գնալով աւելի ու աւելի շատ: Թղթաղբաւը ինչպէս նաև ուրիշ արժէթղթեր, կարող են իրենց արժէքը կորցնել, սակայն ոսկին երբէք: Գարեկից ի վեր պահուած լուսական և հոգմէական ոսկեալ դրամների ոսկին ներկայումս ծախւում է նոյն գնով ինչով որ ծախւում է այժմեանը:

Երևակայեցէ՛ք թէ մի պատերազմ ինչքան կնստի մի պետութեան վրայ: 1870—71-ի Ֆրանս. գերմանական պատերազմը, 1870-ի լուսիս 17-ից մինչև 1871 մայիսի 18ը—Ճրանկֆորտի դաշնագրի վաւերացման թւականը, այսինքն ուղիղ 305 օր— Ֆրանսիայի վրայ նստեց ուղիղ 9 միլիարդ 864 միլիոն 775 հազան ֆր., հաշուելով Գերմանիային վճարած 5 միլիարդը, բոլոր վնասները, փողի տոկոսները և այլն: 1854-ից, Ղերմի պատերազմի թուականը, մինչև 1905 թիւը հաշուելով նաև Ռուս—Ճապոնական պատերազմը, Եւրոպայի պատերազմները յստի են 30 միլիարդ, Միայն Ռուս—Ճապոնական պատերազմը Ռուսաստանի վրայ նստեց 6 միլիարդ, իսկ Ճապոնիայի վրայ՝ 4:

Արդ, ենթադրելով որ Ֆրանսիան հէնց այսօր և եթ պատերազմի դուրս գար Գերմանիայի հետ, առաջինը չորս ամիս պատերազմել կարողացած դէպքում իւր ոսկով, երկրորդը գոնաւորութեամբ ամիս գլուխ կհանէր: Ոսկին պատերազմի ջիղն է, նկատել են իրաւացի կերպով. այսպէս օրինակ՝ Ռուս—Ճապոնական պատերազմի վերջերին Տօկիոյում (Ճապոնիայի մայրաքաղաքը) ոչինչ չէր մնացել, և եթէ Ռուսիան քիչ ժամանակ էլ չաւունակէր պատերազմը՝ Ճապոնիան սնանկութեան էր մատնուելու և շատ հաւանականօրէն մնաք բարեաւ ասելու լաղթութեան:

Կարելի է ուրեմն դրանից հետեցընել այն հսկայ և սոսկալի պատերազմը, որ պիտի տեղի ունենայ սրանից, օրինակ քսան տարի լետով, երբ զինուորական օրէնքները հասած կլինին իրենց կատարելութեան վերջին աստիճանին: Ենթադրելով որ երբեակ (Գերմանական, Աւստրիական և Իտալական) և կրկնակի (Ֆրանսիական և Ռուսական) դաշնակցութիւնները շարունակէին լարատեւել մինչև այդ, առաջինը ճակատամարտի դուրս կարող էր բերել 17 ու կէս միլիոն զինուոր, երկրորդը ուղիղ 20 միլիոն: Միայն մի օրուայ պատերազմը դրանց վրայ կընստէր 280 միլիոն, մի ամսուանը՝ 8 միլիարդ, իսկ մի տարուանը՝ 100 միլիարդ: Դեհնք լըլուութեամբ ուսումնասիրուած հաշիւներ են, քաղուած մի գնդապետի գործից:

26 գալ արդեօք մի օր, երբ ոսկին աւելի քան շատ կլինի: Տրանսվալի, Աւստրալիայի և Մէքսիկի հանքահանքները իւրաքանչիւր տարի հսկայ բռնով ոսկի են շող տալիս աշխարհի շուկան: Միայն 1910 թուի տարուայ ընթացքում, ոսկու արտադրութիւնը 2 միլիարդից աւելի եղաւ: Հանուած ոսկու բոլորը կարելի է

ասել գնում է դրամահատանոց: 1909-ին 1 միլիարդ 557 միլիոն ոսկի դրամ կտրեցին: Աշխարհիս ոսկու մթերքը հաշուում են հիմա 75 միլիարդ. 10—12 տարում 100 միլիարդի կըհասնի նա. իսկ 50—60 տարում՝ 200 միլիարդից էլ կանցնի:

Մեր թոռները, ծոռները կարհամարհեն արդեօք այդ մետաղը այդ ժամանակ և ինչով կըփոխարինեն. որ լինի նրա նըման կոելի, տարածուն և դրամահատութեան համար այնքան յարմար—Ոչնչով, ենթադրում ենք մենք: Որովհետեւ ինչքան որ ոսկու պաշարն է աւելանում, նրա կրկնապատկիւր բազմանում են փոխանակութիւնները: Օրէցօր առւտրական գործունէութեանց առաջ բացւում են նորանոր գործողութիւններ. այսօր—վաղը ամբողջ Աֆրիկան և Զինաստանը ահազին քանակութեամբ դրամահատուած ոսկու պէտք են ունենալու: Ուրեմն ոսկու թագաւորութիւնը ոչինչ չունի վախենալու, հետեւեալը նաև՝ Ֆրանսիան, Արց. Օրդ.—Խան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐԳՈՒԹԵԱՆ

1912 Մարտ 28 Թաւրիդ
«Միտք» շաբաթաթերթի մեծարգոյ պ. խմբագրին.

Խոնարհաբար խնդրում եմ, այս փոքրիկ նամակիս տեղ շնորհելու պատիւն անէք Ձեր թերթի լաւաշիկալ համարում: Զատկական տօնի առթիւ մեր տուն այցելութեան եկողներին, փոխադարձ այցելութեան գնալու հնարաւորութիւն չունենալուս պատճառով, այսու գալիս եմ հրապարակով խորին շնորհակալութիւնը յայտնելու բոլոր մեր տուն եկող ծխականներին և Ղալից եկող ծանօթ բարեկամներին:

Կարապէս Բահանայ Մանուկեան

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹԱՍԻՐԻՋ

Ձատկին, Մարտ 25-ին, պատահաբէր էր առաջնորդ Կարապետ սրբազանը Պատարագի սկզբին սրբազան քարոզից Քրիստոսի բերած և Քրիստոնէական խաղաղութեան մասին:

Պատարագից լիայն կրկնապէս հասարակութեան պատուաւոր անձինք եղան առաջնորդարան, ուր պատրաստուած էր ծոխ սեղան ի պատիւ ժողովրդական: Այդ տեղ թագմականներին յայտնուեց զիգեցիկ լիշատակ թողած հիւպատոս Միլիերի հեռագիրը, խփուած Պետերբուրգից, որով սրբազանի և յարգող հայ հասարակութեան Ձատկին էր շնորհաւորում: Անմիջապէս տըրուեցաւ շնորհաւորական և պատասխան հեռագիր, որ արուեց և հասարակութեան կողմից:

Այդ տեղ ոմանց կողմից յայտնուեց տեղապահ Սուրէնիանի կաթուղիկոսութեան հաստատութեան մասին, մի լուր, որ առնուած էր թերթերից: Սրբազանը ներկաներին առաջարկեց այդ հաստատութիւնն ևս շնորհաւորելու: Այս առաջարկը վերջը չընդունուեց և մերժուեց, ինտելիգենցիայի և մանաւանդ ուսուցիչների պատճառաւորութեամբ:

Այդ օրը ժամը 3-ին Ատրպատականի զօրահրամանատար և Ղարաբաղի Զօրահրամանատար Նուրի Նուրալի-Դովլէտ, թնդած թաւիկներով շէնք, որոնք չըրջապատուած էին 40 զինուած հեծեալներով, եկել էին առաջնորդարան գտակական շնորհաւորութեան: Նոյն կազմը նոյն տօնի գնացել էր և Ռուսաց հիւպատոսարան և ապա վաճառականացեալ պ. Նազարբեկեանի մօտ:

Հասում ենք տնտէր Հանգստարանի խնդրի կարգաւորիչը որոշուել է յանձնել Հեռահաս, և երևի, գործին սիրով նայող երեք Մարտինիկի, մեր կարծիքով, յաւաքոյն տնօրինութիւնն է, և ազնիւ վարուած կլինեն Մուշկիները, եթէ ըստանան այդ գործը և ազատեն Հասարակութեան սեպհականութիւնը աւերմունքից և յափշտակիչ այգեպանից:

Մենք յուսում ենք, որ Լիւսի Հոգարարութիւնը այս երկու տարուայ ընթացքում ունի 3000 թուական բաց, ուսուցիչներին ուսման տարուած է աւելցնել զգուշութիւններին հետ: Վարչի Հոգարարութիւնն երկու տարուայ ընթացքում շուրջ 1500 թան, բաց ունի, եթէ չստացուեն նպատակները: Երկրորդ Հոգարարական կազմը պակաս են և երկու տեղում էլ գործն ընկել է 1—2 անգամի վրայ: Ցանկալի է, որ երկու թաղի Հոգարարութիւնը Հրատարակէին իրենց երկուտուայ հաշիւները: Ղալայի Հոգարարութեան գանձապահ և նախկին անգամ պ. Վաղ. Զաքարեանը Հրատարակել էր իւր մի և առաջի տարուայ հաշիւը: Նոյնը պահանջելի է և այժմ Թո՛ղ Հասարակութիւնը գիտնայ, թէ ի՞նչ օրեր է ապրում իւր այս ու այն դպրոցը:

Հուսում ենք որ առաջնորդարանը ևս ներգրւած է դրամի պակասութիւնից: Առաջնորդ, քարտուղար և այլ ծառայողներ շատ անկանոն և հազիւ մաս-մաս են ըստ տանում ուսմանը: Հուսում ենք, որ պարտքեր են ծանրացած առաջնորդարանի վրայ: Ցանկալի էր առաջնորդարանը իւր մուտք ու ելքի թիւքը և ներկայ դրամական կացութիւնը թերթով Հրատարակէր ի գիտութիւն Հասարակութեան: Զանազան նպատակներով դրամներ են ստացւում առաջնորդարանում, ուստի ցանկալի էր Հրատարակու հաշուետուութիւն, որպէս զի Հասարակութիւնը իրաւիկ լինի թէ ե՛րբ, ո՞րքան և ի՞նչ դրամներ են ստացուել, ե՛րբ, ո՞ւմ և ո՞րքան է բաժանուել կարօտներին:

Արման գործի Հոգարարութեան վերջին դիմումին Սանգար Ռաշիդը երկու ժամ յետոյ հաճեց պատասխանել և տուեց Հոգարարութեան նորա ուղած Հեռագրերը Ահար տալու, անպայման ձերբակալել Բերաշիւ և Հաթամ խոսեցին:

Արման գործի Նորաշէն (Ղաւարաղում) գիւղացիները եկել և բերել են իրենց տալիք տասնորդն ու կապալավարներ: Նորա ցարդ վճարի են 1050 զու. և խնդրում են անցնել իրենց 40 թան, որովհետև բերքը բիւ է եղել և իրենք չեն կարողացել ժողովել խոտացած չափով բաշարն 40 թան: անցնելու մասին Հոգարարութիւնը դիմեց թեմիս սրբազանին:

Նկատարանական Հոգարարութեան անդամներից պ. Մեսրոպ Տր. Յակովբանը քաղաքից առժամանակ բացակայելու պատճառով թեմական տուել էր յայտարարութիւն: Թեմական այդ և մի կարգաւորաւ կախ խնդիրների համար ժողով գումարեց Մարտ 28-ին, ժողովում՝ որոշուեց, որ մինչև պ. Մեսրոպի վերադարձը գանձապահութիւնը վարէ պ. Կ. Աբեանը:

Մարտ 26-ի երեկոյան, ժամը 9—10 Բայրաբազու, Ղալաբէզու, Մարալանի քեդիսուղի և առաջնորդարանի գործաւար պ. Կ. Օհանեանի ձեռամբ խուզարկութիւն կատարուեց Մարալանում մի երկու կասկածելի թուրքերի տներում անյայտացած օր: Մարիամին գանդու համար Յակոբ խուզարկութիւնն քնաց անհետեւանք և ցարդ էլ յայտնի չէ օրիորդի տեղը:

Ապրիլ 1-ին, կիրակի, կատարուեց Հոգահանգիստ տաղանդաւոր թատերակ Գարբիէ Մուշկեանի յիշատակին Լիւսա թաղի Ս. Սարգիս եկեղեցում: Հանգիստ

տաղիւն էր Կարապետ սրբազանը: Կովկասի բոլոր թերթերը նուրիկ են գնահատական և ցաւ արաւայտող խոսք արարականներ, յոգեւածներ Հայ մեծ թատերգակի անուան: Բոլոր կողմերից ստացւում են ցաւակցական հեռագրեր: Խմբագրութիւնս յայտնում է իւր խորին միշտը հանգուցեալի որբացած ընտանիքին:

Մարտ 24-27-ը եղանակները վատացան Թաւրիզում, եկաւ շատ ձիւն: Ձիւն է եկել և Մարաղում: Մանրամասնութիւնները յաջորդել:

Նախորդ համարում ապուած էր, որ ներկայ համարը տպուելու էր Ապրիլ 14-ին, պէտք է լինէր Ապրիլ 7-ին:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Միանդարից մեր սեպհ. տեղեկատու յայտնում է. Սուրբուզում և այլ տեղերում, որոնց Օսմանցիին առ. այժմ տիրապետած է, տղամարդկանց համար պատրաստում են: Մանդուր ցեղապետ Բայրդ աղան մերժել էր՝ միացած Մամաշ և Փիրան ցեղերի հետ: Սուրբուզից 40 ասկիար 2 թնդա նոթով գնացել են վրան պատժելու:

Մարտ 16-ին Սաղրդի դատաւոր Սէֆէդդին խանը (պայքաւոր ցեղապետներից) եկել էր Միանդուր գործի համար, անշուշտ Թաւրիզ հեռագրելու: Սաղր Թովի մասին: Սաղր Թովան այժմ, ըստ տեղեկութեան, գտնուում է Պիճարում: Սաղր Թովան քիւրդ աղաներին, բացի Իէկպօրըքցիներից, լուր է տուել որ ի հարկին, երբ լուր տայ, գան միանան իւր հետ: Սաղր Թովէն Պիճարից փախցրել է տեղի դատաւոր Զան-շահ խանին, սպանել նորա մարդկանցից 6-ին և իւր կողմից դատաւոր նշանակել:

Միանդուր

Գարալաքից Միանդուրի մօտ Թաւրիզից քիւրդ գաղթած Հայերին ևս որոնց դրութիւնը խիստ աննախանձելի է. Ագա քիւրդի հողերը չեն դրուած մինչև այժմ՝ չնայելով այս նկատմամբ քանիցս կրկնուած կառավարութեան խիստ հրամաններին: Մի ամիս առաջ ուղարկած Շոջա եղ-Թովի հրամանը տեղական դատաւորը 2—3 շաբաթ պահել է մօտը, գործադրումը ձգձգել, մինչև որ գործ. խորհրդի անդամները գնացել տեսնէին թէ Հոդերն արդէն տրուած են ուրիշ հեռաւոր թուրք գիւղացիների և ցանուած շատ չնչին բան է քնացել: Առաջնորդարանը նորից հրաման ստացու և ուղարկեց Գործ. խորհրդին, որ ջանայ մի կերպ բուսարարութիւն ստանալ խեղձ գաղթականների համար:

ԱՐԱՔԻՆ

Տաճիկները տեղի են տուել ռուսաց և հաւանական է որ պատերազմ չը լինի, և սահմանի գործը երկու կողմն է գոհացուցիչ կերպով կարգաւորուի:

Ձէյիս Արդու Ղաղըրը, որ նշանաւոր քիւրդ ցեղապետ և գիւղատէր է և նաև Տաճիկաց պարսկական տեղաւոր, մի ուրիշ քիւրդ նշանաւոր Ձէյիսի հետ ձերբակալուելով՝ ռուսապոլիկ տարուել են Պոլս: Քիւրդ աշխարհներն ու աղայանները մեծապէս գրգռուած են այդ պատճառով և անհանգիստ են: Կարծուում է նրանց ձերբակալութիւնը կապ ունի այն բանի հետ, որպէս թէ նրանք գաղտնի կերպով ուղեւոր են եղել անկախ Քիւրդիստան հաստատուել: Տաճիկների՝ ռուսների հետ պատերազմից խուսափելու պատճառներից մէկն էլ այս գէպն է, որ քիւրդերը զերգուել են տաճիկ կառավարութեան դէմ և տաճիկները խոհեմութիւն են համարել առ. այժմ իրենց գործը ռուսների հետ խաղաղութեամբ վերջացնել: (Անգլ-ից)

Ջալոսիա
Հրգեհ Տօկոյում
Այս օրերս Տօկոյում խիստ քամու

ժամանակ հրգեհ ընկաւ այն թաղում, ուր ապրում են պոռնիկ կանայք: Այրուեց 35 խոշոր խանութ և 160 տուն: Գրակի մէջ խորովուեցին հազարից աւելի պոռնիկ կանայք և 200 տղամարդիկ:

Սուրհ

Միայն Զանգուէի նահանգում (2ինաստան) այժմ աւելի քան 100,000 մարդ սովից տանջուում է:

Անգլիական գործադուրը ազգին ամեն շաբաթ պատճառում է 10 միլիոն ֆունտ վնաս:

Ռուսաց արտաքին գործերի մի-նիստը Սաղրուրը չընդունեց մակեդոնական պատգամաւորներին:

Առ 1-ն յունվարի 1912 թ. Ռուսաստանի բոլոր բանտերում գտնուողների թիւը 189,000 մարդ էր, անցեալ տարուանից 10000-ով աւելի:

«P. Y.»

ՊՈՍՏԱՐԿՂ

Ռեւ. — պ. Մ. Պատմ.-ին. — Ծնորակաւորութեամբ ստացանք 40 դո.
Ուրմի. — պ. Տ. Թովմ.-ին. — այստեղ Ձեր հայուին ստացանք 20 դո.
Միւր ապառիկ սիրող բաժանորդներին. —
«Արդե՞ք պալու է մի օր ժամանակ որ սիրտ անէք 14—20 դ. ձեր բաժնեկները հասցնէք մեզ և աղատէք անտեղի և բազմաթիւ դիմումներից ու իշխումներից:
Սպանիա. — Ֆելիքսին. Ստացուեց Ձեր նամակը չնորակալ ենք: Սպասում ենք:
Ուրմի. — Ա. — Մ.-ին. — Փութացրէք դրամները:
Մարաղա. — Պ. 2-ին. — ”
Խմբագիր — հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

MAF A Z H H N H A P H H N
Propriétaire J. D. Thomassian

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Զատիկուայ առթիւ յատկապէս ստացուել են ամեն տեսակի և ամեն նախնաւոր քաղցրեղէններ, կանֆլտներ, թարմ շօկուլթներ, բուրձներ և այլն և այլն:
Նաև ամեն շաբաթ ստացուում են եւրոպական առաջնակարգ ֆաբրիկաներից ամենաճոխ նորութիւններ կալանթների և արդ ու զարդի վերաբերեալ:

Տիւրիներ չԵՄԵՐ — պալտօներ, մանար. շալ և բատիստ, կարուած և կիսակար բլուզներ, իւպկաներ, ամեն չափի կորսէթներ, կանայքի սպիտակեղէններ շապիկներ, ներքնազգեստներ, շրջազգեստներ, գիշերային շապիկներ և այլն:

ՊԵՐՈՆՆԵՐԻ ՉԵՄԵՐ — սէզօնի և կիսասէզօնի պալտօներ 50—120 դրան-կաստիւմներ 70—120 դրն. բլուզներ 60 դրն. շալ 14—35 դրն. ֆան թէզի ժիլէթներ 17—45 դրն. շապիկների, բլուզերի, մանշէթների և քրավաթների մեծ քօլեքցիա:

ՏԳՆԵՐԻ ՎԵՍՏԻՄԵՆՏԻ 4—10 տարեկան 20—35 դրն.
ԵԼԶԻՆԵՐԻ ԶԵՆՏԵՆՏԻ 3—10 տարեկան 25—60 դրն.

Դիւի սանդղների և սարքերի, ընդիրքների, փորտամանների և պալտօսակների մեծ քօլեքցիա, խալիւր, խաղալիքներ ամեն տեսակի և ամեն արժէքի. լիբօրի կարնիթիւրներ, սեղանիկներ թէյի և պապիլոսի համար ծալովի, փէշէնի, կանֆլթի և վարէնի հրաշալի վագեր. երեսանների ծալովի կառքեր և աթոռներ, սեղանի կիօնկա արշինով և հատով, ամեն լայնքի և կիօնկա կրծկալ երեսանների. սենեակի և կօրիդօրի համար լինօլթօմ Ծառաջիկայ սէզօնի օյմացու հրաշալի կտորներ և բլուզացու:

Գաւառներից պատուէրներ կրնուելի և ամենայն խնամքով կրկատարի և բանակութեան համաձայն արժէքներ կտայ:

ՄԱՆՈՒԿ ՄԱԶՄԱՆԵԱՆ ԵՐ ԸՆԿ.

ԿԱԼԲՍՍ ԱՐՏԱԳՐԱՂՆԵՐ

Ալեքսանդրապօլում և Թիֆլիսում յայտնի մեր պատրաստած և մեծ ընդունելութիւն գտած կալքասով. Թաւրիզում (Ղալա թաղում) արդէն բացել ենք գործարան, որտեղից ամեն օր պատրաստուում և արտադրուում են միանգամայն թարմ կալքաս, աղիսոն, սաւիսկա, վիշինա եւ այլն:

Ունինք Ռուսաստանում պատրաստուած ամեն տեսակի խմիչքներ չափազանց մատչելի գներով, որպիսիք չէք գտնի ոչ մի մագաղինում: Ունինք իսկական կալքաքու և այլ տեսակի ընտիր գինիներ, որոնք չեն ծախուում Թաւրիզի գինիների առասպելական թանկ արժէքներով. թարմ գարեջուր և ամեն տեսակի ռուսական զակուսկեղեններ: Ծախուում են և կրքիցներ, աժան սարգիներ, եկէք և գնեցէք թարմ, աժան և ընտիր ապրանքներ և դուք մեզ չէք մոռանայ: Կալքասի ռուսական ֆունտը 30կ. (33 շահի). մեր գործարանը լուսանկար Ստեփան Ստեփանեանի նոր խանութներում, Գ.Միլիօնի տան մօտ, բողոքականների աղօթարանիկողք ին: Ունինք շրջաբախտի իւր գրվ. 2դ. 10 շհ. և կօստերմիներ:

Գ Ա Ր Ո Ւ Ն

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍՍԿ ԲԺՂԿԵԱՆԻ)

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՆՈՐ — ստացած ապրանքներ Ապրիլի 4 ին.

1. Տղամարդկանց ամառային խճուրէ գլխարկներ, 2. վարատնիկները ամուր պահելու ռեզիններ, 3. սպիտակ ընտիր քաթաններ, մետաքսէ կտորներ, սպիտակ պիկներ, երեսի շապիկացուներ, աստառացուներ գանազան գոյներ:
4. Տղամարդկանց դեականալ խաքի կտորներ, 5. Գուլպաների ռեզիններ, կանացի թաշկինակներ, փորկապներ և այլն և այլն: